# Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 5)**

27 ապրիլի 2018թ. ժամը՝ 15⁰⁰

1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տավուշի թեմի առաջնորդարանի շինարարական աշխատանքների իրականացում» ծրագրի մասին:
(Արտուշ Կիրակոսյան)

2. Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի կողմից իրականացվող «Ստեփանակերտ քաղաքի Սուրբ Աստվածամոր Հովանի եկեղեցու տանիքի կառուցում» ծրագրի մասին:
(Արտուշ Կիրակոսյան)

3. Հայկական կարմիր խաչի կողմից իրականացվող «եմ՝ հանուն երիտասարդության աշխատունակության խթանում» ծրագրի մասին:
(Աննա Եղիազարյան)

**4. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին**
(Արման Բարխուդարյան)

4.1 Հայաստանի Հանրապետությունում առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

4.2 Հայաստանի Հանրապետությունում առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **(N 1)**:

4.3 Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **(N 5)**:

4.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 1** («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ):

4.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1198-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սուրբ Կամիլլո» բարեգործական հիմնադրամ):

4.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1145-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ):



4.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N Մ-1060-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն):

**5. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին**
(Արման Բարխուդարյան)

5.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1411-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

5.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի մարտի 16-ի N Մ-201-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

5.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 15-ի N Մ-486-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ):

5.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայաստանի մանուկների հիմնադրամ):

5.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ):

5.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ):

5.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1184-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia):

**6. Այլ հարցեր**

6.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 10-ի N Մ-972-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Տաթևի վերածնունդ» հիմնադրամ):

6.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի մարտի 16-ի N Մ-167-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ):

6.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 6-ի N Մ-234-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հացիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն):

ԴՐ 5/1

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ապրիլի 2018 թվականի N Մ- - Ա**
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՎՈՒՇԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը; հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի -ի N 01.1/14-2/-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի ապրիլի -ի N 02/14/-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի -ի N 06/3-8/-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 4,200,000 դրամ արժողությամբ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տավուշի թեմի առաջնորդարանի շինարարական աշխատանքների իրականացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հրազդան ցեմենտ քորփորեշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03022523) 2018 թվականի մարտի 13-ին կնքված՝ N 03Գ/018 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պորտլանդ ցեմենտի ձեռքբերում՝ 4,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ԴՐ 5/1

Հաստատված է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
20 ապրիլ, 2018թ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տավուշի թեմի առաջնորդարանի շինարարական աշխատանքների իրականացում

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Թավուշի թեմում առաջնորդարան կառուցելու համար ձեռք բերել ցեմենտ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Տավուշի մարզ, ք. Իջևան : Եկեղեցաշինական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 4.200.000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 13 մարտ, 2018- 30 ապրիլ, 2018: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տավուշի թեմում առաջնորդարան կառուցելու համար ձեռք բերել ցեմենտ, որի ընդհանուր գումարը կազմում է 4.200.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: Մատակարարումը իրականացվելու է «Հրազդան ցեմենտ քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից, (ՀվՀՀ 03022523 ), պայմանագիր 03Գ/018՝ կնքված 13 մարտ, 2018թ. : Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 13 մարտ, 2018 –30 ապրիլ, 2018 թ. : |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տավուշի թեմում առաջնորդարան կառուցելու համար ձեռք բերել ցեմենտ, որի ընդհանուր գումարը կազմում է 4.200.000 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | չի նախատեսվում |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժնի հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

Ար. 5/1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01.1/14-2/7218-18
18.04.18թ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
13.04.2017թ. N 15/15.9/5854-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տավուշի թեմում առաջնորդարանի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/11820-18
18.04.18թ

Ար. 5/1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am

19.04.18թ N 02/14/53795-18

Ձեր N ____________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի կատարումն ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 13-ի 15/15.9/5854-18 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տավուշի թեմում առաջնորդարանի կառուցում» ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15

035/11880-18
19.04.18թ

Ար. 5/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«19» 04 2018թ.

No 06/3-8/1993-18

Ձեր No ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 13.04.2018թ.
թիվ 15/15.9/5854-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տավուշի թեմում առաջնորդարանի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.

Նախագծին կից ներկայացված՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տավուշի թեմում առաջնորդարանի կառուցում» ծրագրի 1-ին կետի համաձայն՝ ծրագրի նպատակն է ցեմենտի ձեռքբերումը: ՀՀ կառավարության 16.01.2003թ. թիվ 66-Ն որոշմամբ հաստատված՝ «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգ»-ի 6-րդ կետի համաձայն՝ բարեգործական որակման ներկայացվող ծրագրում նկարագրվում են ծրագրի նպատակները, նախատեսվող միջոցառումները, նշվում են դրանց կատարողները և ստացողները: Ուստի ծրագրի նպատակը և անվանումը միմյանց չեն համապատասխանում:

Միաժամանակ, կից ներկայացված ծրագիրը իրենից ներկայացնում է գործարք, որի նկատմամբ Հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված արտոնությունը

944/11334-18
19.04.18

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Ար. 5/1

կարող է կիրառվել միայն որպես բարեգործական ծրագրին հարակից գործարք որակվելու դեպքում:

Ելնելով վերոգրյալից, ներկայացված տարբերակով ծրագրի բարեգործական որակումը գտնում ենք ոչ նպատակահարմար:

Հարգանքով՝ Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ, Ն. Բեժանյան
Հեռ. 060544705

ԿՊ.5/1

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ
Հեռ. (+374 10) 517-142; Ֆաքս (+374 10) 517-301; Էլ. փոստ varchatntesakan@etchmiadzin.am

№ 126 20 ապրիլ, 2018թ.

ՄԵԾԱՐԳՈ
ՏԻԱՐ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
Պատճեն՝ ՄԵԾԱՐԳՈ

ՏԻԱՐ Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆԻՆ
ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
*Երևան*

Մեծարգո Տիար,

Ի պատասխան Ձեր գրության և հաշվի առնելով ՀՀ Կառավարության Առընթեր Պետական Եկամուտների Կոմիտեի դիտողությունը, Ձեզ ենք ներկայացնում « Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տավուշի թեմում առաջնորդարանի կառուցում » ծրագրի լրամշակված տարբերակը:

Առ Աստված աղոթքով մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, գործող հաջողություններ և ամենայն բարիք:

Օրհնությամբ՝

[illegible] Բաբայան
[illegible]ական Բաժնի Տնօրեն

Առդիր՝ 1 թերթ:

107 - 12488
26 04 18

ԿՊ.5/1

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տավուշի թեմի առաջնորդարանի շինարարական աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք. Նախագծին կից ներկայացված՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տավուշի թեմում առաջնորդարանի կառուցում» ծրագրի 1-ին կետի համաձայն՝ ծրագրի նպատակն է ցեմենտի ձեռքբերումը: ՀՀ կառավարության 16.01.2003թ. թիվ 66-Ն որոշմամբ հաստատված՝ «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգ»-ի 6-րդ կետի համաձայն՝ բարեգործական որակման ներկայացվող ծրագրում նկարագրվում են ծրագրի նպատակները, նախատեսվող միջոցառումները, նշվում են դրանց կատարողները և ստացողները: Ուստի ծրագրի նպատակը և անվանումը միմյանց չեն համապատասխանում: Միաժամանակ, կից ներկայացված ծրագիրը իրենից ներկայացնում է գործարք, որի նկատմամբ Հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված արտոնությունը կարող է կիրառվել միայն որպես բարեգործական ծրագրին հարակից գործարք որակվելու դեպքում: Ելնելով վերոգրյալից, ներկայացված տարբերակով ծրագրի բարեգործական որակումը գտնում ենք ոչ նպատակահարմար: | Առաջարկությունը հաշվի է առնվել լրամշակված ծրագիրը կցված է: |
| | |
| | |

***ՆԱԽԱԳԻԾ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ապրիլի 2018 թվականի N Մ- - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՀՈՎԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՆԻՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի -ի N 01.1/14-2/-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի ապրիլի -ի N 02/14/-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի -ի N 06/3-8/-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի կողմից իրականացվող՝ 28,772,485 դրամ «Ստեփանակերտ քաղաքի Սուրբ Աստվածամոր Հովանի եկեղեցու տանիքի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի (ՀՎՀՀ՝ 90342753) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տեխնոտանիք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00140478) 2018 թվականի ապրիլի 5-ին կնքված N՝ ԿՊ-003/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տանիքի տանիքապատման, ջրամեկուսացման և ջրահեռացման աշխատանքների իրականացում՝ 28,772,485 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է**

**Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի**
**Առաջնորդ Պարգև Արքեպիսկոպոս Մարտիրոսյանի կողմից**
**«2» ապրիլի 2018թ.**

**«Ստեփանակերտ քաղաքի նորակառույց Սուրբ Աստվածամոր Հովանի եկեղեցու տանիքի կառուցում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Արցախի Հանրապետության մայրաքաղաքում ունենալ եկեղեցի, քաղաքի բնակչության հոգևոր կարիքների բավարարման համար |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | **Բարեգործը** | Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմ (ԼՂՀ, ք.Շուշի, փ. Ղազանչեցոց 68) |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմ ՀՎՀՀ՝ 90342753 (ԼՂՀ, ք.Շուշի, փ. Ղազանչեցոց 68) |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Արցախի Հանրապետության ք. Ստեփանակերտ |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 28,772,485 ՀՀ դրամ |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի հավատացյալ ժողովուրդը |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 2018 թ. ապրիլի 2-ից մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը |
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | Սուրբ Աստվածամոր Հովանի եկեղեցու տանիքի տանիքապատման, ջրամեկուսացման և ջրահեռացման աշխատանքների իրականացում 28,772,485 ՀՀ դրամ |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | Սուրբ Աստվածամոր Հովանի եկեղեցու տանիքի տանիքապատման, ջրամեկուսացման և ջրահեռացման աշխատանքների իրականացում 28,772,485 ՀՀ դրամ |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Չեն նախատեսվում |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | Արցախի Հանրապետության կառավարության հետ |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և ԼՂՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (կիսամյակային և ամփոփ հաշվետվություններ) |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Լր. 5/2

«26» 04 2018թ.
No 06/3-8/21140-18
Ձեր No ________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 23.04.2018թ.
թիվ 15/15.9/6174-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի կողմից իրականացվող «Ստեփանակերտ քաղաքի Սուրբ Աստվածամոր Հովանի եկեղեցու տանիքի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Ն. Բեժանյան
Հեռ. 060544705

044/12472-18
26.04.18թ



Լր. 5/3

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ապրիլի 2018 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՄ՝ ՀԱՆՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի -ի N 01.1/14-2/-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի ապրիլի -ի N 02/14/-18, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2018 թվականի ապրիլի -ի N -18, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2018 թվականի ապրիլի -ի N -18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի օգոստոսի -ի N 06/3-8/-18, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2018 թվականի ապրիլի -ի N -18 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիք մարզպետարանի 2018 թվականի ապրիլի -ի N -18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական կարմիր խաչի ընկերության (Հայաստանի Հանարպետություն քաղաք Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023) կողմից իրականացվող՝ 141,506,085 դրամ ընդհանուր արժողությամբ «Եմ՝ Հանուն երիտասարդության աշխատունակության խթանում» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Իջևանի, Դիլիջանի, Սևանի և Գավառի քաղաքապետերին և Հայաստանի Հանրապետության Տավուշի և Գեղարքունիք մարզպետներին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայկական Կարմիր խաչի ընկերության
Գլխավոր քարտուղարի՝ Աննա Տեր-Թադևոսյանի կողմից
23.04.2018 թ.

«ԵՄ՝ Հանուն Երիտասարդության. Աշխատունակության խթանում»
ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է բարելավել մարզաբնակ երիտասարդների շրջանում կրթության և աշխատունակության հնարավորությունները՝ ունում ստանալու և աշխատանք գտնելու նպատակով կազմակերպել խորհրդատվական կենտրոններ՝ շահագրգիռ կազմակերպությունների հետ համագործակցությամբ, ինչպես նաև հետաքրքրված երիտասարդների շրջանում խթանել ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու փորձերը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Եվրամիություն |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն Տավուշի և Գեղարքունիքի մարզեր, երիտասարդների հիմնահարցերի ոլորտ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 141 506 085 (հարյուր քառասունմեկ միլիոն հինգ հարյուր վեց հազար ութսունհինգ) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Տավուշի և Գեղարքունիքի մարզերի մոտ 4000 երիտասարդներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2018 ապրիլի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Շահագրգիռ կողմերի հետ համագործակցության հաստատում՝ երիտասարդների աշխատունակության հիմնահարցերի լուծմանն աջակցելու նպատակով<br><br>1.1. Ազգային մակարդակում և մարզերում համագործակցությունների հիմնում և հանդիպումների, կլոր սեղան քննարկումների կազմակերպում շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների և լրագրողների հետ:<br><br>Տևողությունը 2018թ ապրիլի 1- 2021թ մարտի 31<br>Ընդհանուր բյուջեն 10 915 770 ՀՀ դրամ<br><br>1.2. Աշխատաշուկայի իրավիճակի գնահատման և Երիտասարդների կարիքների գնահատման հետազոտություն<br><br>Տևողությունը 2018թ ապրիլի 1- 2018թ հունիսի 30<br>Ընդհանուր բյուջեն 2 494 020 ՀՀ դրամ<br><br>1.3. Մասնակցություն միջազգային հանդիպումներում՝ փորձի փոխանակման նպատակով՝ այդ թվում մասնակցություն Դանիական ԿԽ կողմից կազմակերպվող ամենամյա «Առաջնորդության ակադեմիայի» դասընթացին<br><br>Տևողությունը 2018թ ապրիլի 1- 2021թ մարտի 31<br>Ընդհանուր բյուջեն 6 319 563 ՀՀ դրամ<br><br>2. Երիտասարդների շրջանում աշխատունակության բարելավում և համայնքային գործունեության խթանում<br><br>2.1. Տավուշի և Գեղարքունիքի մարզերում 4 երիտասարդական կենտրոնների հիմնում՝ առնվազն երեք տարով ՏԻՄ կողմից տրամադրված տարածքներում, կենտրոնների կահավորում և էլեկտրոնային տեխնիկայով ապահովում: Ծրագրի ավարտից հետո՝ կենտրոնների գործունեությունը ունենալու է շարունակական բնույթ հաշվի առնելով երիտասարդական հիմնահարցերին անդրադառնալու կարևորությունը, ՏԻՄ-երի հետ համագործակցությունը և կամավորների ներուժով նշված կենտրոնների կառավարումը:<br><br>Տևողությունը 2018թ մայիսի 1- 2021թ մարտի 31<br>Ընդհանուր բյուջեն 9 219 600 ՀՀ դրամ |

Կր. 5/3

Կր. 5/3

| | | |
|---|---|---|
| | | 2.2 100 ՀԿԽԸ կամավորների համար ուսուցանողների դասընթացների /թվով 48 դասընթաց/ և կամավորների կողմից մոտ 4000 երիտասարդների համար կարողությունների զարգացման թրեյնինգների /թվով 16 թրեյնինգ/ և համայնքային միջոցառումների / թվով 6 միջոցառում/ կազմակերպում։<br><br>Տևողությունը 2018թ հունիսի 1- 2021թ մարտի 31<br>Ընդհանուր բյուջեն 37 261 959 ՀՀ դրամ<br><br>2.3. Մասնագիտական կողմնորոշման դասընթացի կազմակերպում դպրոցներում ներառյալ ուսուցանողների պատրաստման դասընթացը և աշխատանքային նյութերի տպագրությունը<br><br>Տևողությունը 2018թ սեպտեմբերի 1- 2020թ մայիսի 31<br>Ընդհանուր բյուջեն 6 524 640 ՀՀ դրամ<br><br>2.4. «Աշխատանքի տոնավաճառի» կազմակերպում ներառյալ համապատասխան տեխնիկայի վարձակալություն և լուսաբանման նյութերի պատրաստում, յուրաքանչյուր մարզում մեկ անգամ ընդամենը 2 «տոնավաճառ»<br><br>Տևողությունը 2019թ Մարտի 1- 2021թ մարտի 31<br>Ընդհանուր բյուջեն 4 515 240 ՀՀ դրամ<br><br>2.5. Ծրագրի լուսաբանման նպատակով հանդիպումների կազմակերպում տարբեր ոլորտների ներկայացուցիչների հետ ընդամենը 8 հանդիպում, լուսաբանող տպագիր նյութերի տպագրում և տեսանելության ապահովման նյութերի տպագրում /բաժակներ, գլխարկներ, շապիկներ, հիշողության կրիչներ, և այլն/<br><br>Տևողությունը 2018թ ապրիլի 1- 2021թ մարտի 31<br>Ընդհանուր բյուջեն 17 919 120 ՀՀ դրամ<br><br>3.Ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հնարավորություններին երիտասարդների մասնակցության խթանում<br><br>3.1. Ձեռնարկատիրության վերաբերյալ թեմաներով երիտասարդական ճամբարների կազմակերպում յուրաքանչյուր մարզում մեկ անգամ ընդամենը 2 ճամբար այդ թվում նաև համապատասխան թեմաներով |

| | | |
|---|---|---|
| | | թրեյնինգներ և խմբակային աշխատանքներ<br><br>Տևողությունը 2019թ մայիսի 1- 2020թ հոկտեմբերի 1<br>Ընդհանուր բյուջեն 19 072 752 ՀՀ դրամ<br><br>3.2. Ծրագրի շրջանակներում երիտասարդների կողմից ծավալած ձեռնարկատիրական գործունեության լուսաբանում տեսանյութերի, հոդվածների և լուսանկարների պատրաստում<br><br>Տևողությունը 2019թ օգոստոսի 1- 2020թ հոկտեմբերի 1<br>. Ընդհանուր բյուջեն 2 364 000 ՀՀ դրամ<br><br>Կազմակերպական ծախսեր՝ ինչը ներառում է մարզերում իրականացվող գործունեության մշտադիտարկման ծախսեր 2 578 533 ՀՀ դրամ, վառելիքի ծախս 1 241 100 ՀՀ դրամ, հաղորդակցման իրականացման համար անհրաժեշտ հեռախոսակապի վճարներ 1 446 768 ՀՀ դրամ, առողջի իրականացման ծախսեր 1 773 000 ՀՀ դրամ և աշխատավարձ՝ 17 860 020 ՀՀ դրամ<br><br>Տևողությունը 2018թ ապրիլի 1- 2021թ մարտի 31<br><br>Ընդհանուր բյուջեն 24 899 421 ՀՀ դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրով նախատեսված ծառայություններն են՝<br><br>- Գրենական, գրասենյակային և ուսուցողական նյութերի ծախսեր՝ ծրագրի ընթացքում շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների և լրագրողների համար կազմակերպվող հանդիպումների, կլոր սեղան քննարկումների, 100 կամավորների համար թվով 48 թրեյնինգների, մոտ 4000 երիտասարդի համար կարողությունների զարգացման թրեյնինգների, ճամբարների կազմակերպման նպատակով՝ ընդհանուր գումարը՝ 29.000.732 ՀՀ դրամ<br><br>- Ծրագրի ընթացքում շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների և լրագրողների համար կազմակերպվող հանդիպումների, կլոր սեղան քննարկումների, կամավորների համար դասընթացների սրահի վարձակալության և հյուրասիրության վճարներ ընդամենը՝ 10.915.770 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| | | - Աշխատաշուկայի իրավիճակի գնահատման և կարիքների գնահատման հետազոտությունների իրականացում 2.494.020 ՀՀ դրամ<br><br>-Ճանապարհածախսի, այդ թվում թռիչքի տոմսերի և օրապահիկի ծախսեր ընդամենը 6 319 563 ՀՀ դրամ հետևյալ միջազգային հանդիպումների համար.<br>- Բոլոր մասնակից կազմակերպությունների Հայկական, Բելառուսական ու Վրացական Կարմիր խաչի Ազգային ընկերությունների երիտասարդ շահառուների մասնակցություն երկու երիտասարդական ֆորումների Բելառուսի Հանրապետությունում կամ Վրաստանում<br>- Մասնակից կազմակերպությունների երիտասարդ կամավորների մասնակցություն ամենամյա առաջնորդության դասընթացների Դանիայում<br>- Ծրագրում ներգրավված անձնակազմի անդամների մասնակցություն ծրագրի համակարգող Դանիական Կարմիր խաչի կողմից կազմակերպվող համակարգման և արդյունքների բարելավմանն ուղղված հանդիպումների Դանիայում<br><br>- Թվով 4 Երիտասարդական ակումբների համար 3 տարով տարածքի վարձակալություն և պահպանման ծախսեր, ներառյալ կոմունալ վճարներ 5.491.600 ՀՀ դրամ<br><br>- Թվով 4 Երիտասարդական ակումբների համար էլեկտրոնային տեխնիկական միջոցների և կահույքի ձեռք բերում 3 728 000 ՀՀ դրամ<br><br>-«Աշխատանքի տոնավաճառի» համար տեխնիկայի վարձակալություն 4.515.240 ՀՀ դրամ<br><br>- Տպագրություն, այդ թվում ծրագրի լուսաբանման և տեսանելիության ապահովման նյութերի, բաժակների, գրիչների, շապիկների, հիշողության կրիչների, բուկլետների, ուղեցույցների, մասնագիտական կողմնորոշման դասընթացների նյութերի և այլն ընդամենը 24.443.760 ՀՀ դրամ<br><br>- Թվով 100 երիտասարդների համար առնվազն եռօրյա ճամբարների, երիտասարդների թրեյնինգների կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհածախսի, գիշերակացի և սննդի ծախսեր, ընդամենը |

Ար. 5/3

| | | |
|---|---|---|
| | | 29.006.280 ՀՀ դրամ<br><br>- Ծրագրի շրջանակներում երիտասարդների կողմից ծավալած ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ տեսանյութերի, հոդվածների և լուսանկարների պատրաստման ծառայություններ ընդամենը 2 364 000 ՀՀ դրամ<br><br>- Ծրագրի աուդիտի իրականացման ծախսեր ընդամենը 1 773 000 ՀՀ դրամ<br><br>- Վառելիքի ծախս ընդամենը 1 241 100 ՀՀ դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր ինչը ներառում է մարզերում իրականացվող գործունեության մշտադիտարկման ծախսեր 2 578 533 ՀՀ դրամ, վառելիքի ծախս 1 241 100 ՀՀ դրամ, հաղորդակցման իրականացման համար անհրաժեշտ հեռախոսակապի վճարներ 1 446 768 ՀՀ դրամ, աուդիտի իրականացման ծախսեր 1 773 000 ՀՀ դրամ և աշխատավարձ 17 860 020 ՀՀ դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Տավուշի և Գեղարքունիք մարզպետարաններ, Իջևանի, Դիլիջանի, Սևանի և Գավառի քաղաքապետարաններ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ սպորտի և երիտասարդների հարցերի նախարարություն |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել ամսական, եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Դանիական Կարմիր Խաչին որպես Եվրամիության հետ առաջնային գործընկեր: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Ներկայացվելու են հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին համաձայն սահմանված կարգի |

Ար. 5/3

ԼԻ. 5/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ.՝ (+374 11) 800 033, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

01-1/14-2/7293-18
19.04.18թ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր
12.04.2018թ. N 15/15.9/5798-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ԵՄ՝ Հանուն երիտասարդության աշխատունակության խթանում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ծրագրի 10-րդ կետում նշված է 166,057 եվրոյին համարժեք դրամ գումարի ապարանքների ու ծառայությունների ձեռք բերման գործարքներ, մինչդեռ ծրագրով նախատեսված ամբողջ 239,435 եվրո գումարից մեր դիտարկմամբ ձեռքբերման գործարքներ չեն միայն մարզերում իրականացվող գործունեության մշտադիտարկման և աշխատավարձի ծախսերը՝ ընդամենը 34,563 եվրո: Հետևաբար, առաջարկում ենք վերանայել և վերախմբագրել ծրագրի 10-րդ կետով նախատեսվող ձեռքբերման գործարքները, ինչպես նաև տվյալ ծախսատեսակները խմբավորել ոչ թե ըստ փուլերի, այլ ըստ ուղղությունների:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Կատարող՝ Նոնա Կարապետյան
Հեռ. 011 910-437

034/11947-18
19.04.18թ

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ԼԻ. 5/3

«18» 04 2018թ.
No 06/3-3/19656-18
Ձեր No ________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 12.04.2018թ.
թիվ 15/15.9/5798-18 գրության

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ԵՄ՝ հանուն երիտասարդության աշխատունակության խթանում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք.

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Տավուշի և Գեղարքունիքի մարզերում թվով 4 երիտասարդական կենտրոնների հիմնում՝ ներառյալ կահավորում և տեխնիկայով ապահովում: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ ծրագրի ընթացքում ամբողջ գույքի ձեռքբերման անհրաժեշտությունը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, քանի որ ներկայացված ծրագրից պարզ չէ, թե բարեգործական որակման ներկայացված ծրագրի ավարտից հետո ինչպես է նախատեսվում տնօրինել այդ գույքը: Միաժամանակ, առաջարկում ենք ծրագրում նշել այն երաշխիքների մասին, որոնց համաձայն վարձակալվող տարածքները, որտեղ իրականացվելու են հարդարման և կահավորման աշխատանքներ, հետագա տարիներին ևս կտրամադրվեն կազմակերպությանը՝ վերջինիս կողմից շարունակական ծրագրեր իրականացնելու

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57 կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

044/11729-18
18.04.18թ

Կր. 5/3

համար, այլ ոչ թե խնդիր կառաջանա նոր տարածքների վարձակալման, դրանց հարդարման և կահավորման համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հայտնում ենք, որ մինչև բարձրացված հարցերի հստակեցումը ծրագրի բարեգործական որակումը գտնում ենք ոչ նպատակահարմար:

Հարգանքով՝ Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ


Կատարող՝
ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի
և սպասարկման վարչության ՀՎՍՀԿ
Արամայիս Բարսեղյան
Հեռ. 060544705


Կր. 5/3


## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594011 Էլ. փոստ՝ artur.hovhannisyan@justice.am


19.04.18թ. N 02/14/53796-18

Ձեր N ____________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի 15/15.9/5798-18 հանձնարարականի՝ հայտնում ենք, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Եմ՝ հանուն երիտասարդության աշխատունակության խթանում» ծրագրի 5-րդ կետում անհրաժեշտ է խմբագրել ծրագրի բնագավառին վերաբերող դրույթները: Ծրագրի 10-րդ կետի 1.5.-րդ կետում թռիչքի տոմսերին և օրապահիկի ծախսերին վերաբերող դրույթներում անհրաժեշտ է հստակեցնել, թե վերջիններս ինչ առնչություն ունեն ծրագրի նպատակների հետ: Այդ առումով ծրագրի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**


Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 15


035/11882-18
19.04.18թ.

Ար. 5/3


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
**DEPUTY MINISTER**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel 54 67 16, 58 03 02, Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am


N 03/07-1/4367-18 «------» 18.04.18թ. 2018թ.

*ՀՀ կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման հանձնաժողովի*
*նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի ապրիլի 12-ի №15/15.9/5798-18 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ԵՄ՝ Հանուն երիտասարդության աշխատունակության խթանում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

***ՀԱՐԳԱՆՔՈՎ՝*** ?????? ???????
Apr 17 2018 2:45 PM +04:00 ***ՄԱՆՈՒԿ ՄԿՐՏՉՅԱՆ***

*կատ. Նոննա Սահակյան*
*հեռ. 562351*

031/11725-18
18.04.18թ

Ար. 5/3


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
**ՆԱԽԱՐԱՐ**


«13» 04 2018 թ. № 1/06/548-18


ՀՀ, Երևան-0001, Աբովյան 9
հեռ./ֆ.՝ (+374 11) 526-529
էլ. փոստ՝ msy@msy.am
էլ. կայք՝ www.msy.am


Ձեր 2018 թվականի ապրիլի 12-ի № 15/15.9/5798-18 գրության

*Հայաստանի Հանրապետության*
*կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման*
*հանձնաժողովի նախագահ*
*Ս. Տեր-Սիմոնյանին*

*Հարգելի՛ պարոն Տեր-Սիմոնյան*

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ԵՄ՝ հանուն երիտասարդության աշխատունակության խթանում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը առաջարկություններ և դիտողություններ չունի:

*Հարգանքով՝*

*պաշտոնակատար* *Հ. Ռոստոմյան*

Կատարող՝ սպորտի բարձրագույն նվաճումների
քաղաքականության վարչություն
Արևիկ Կարապետյան, հեռ.՝ (011) 52-99-79

022/11407-18
13.04.18թ

Կր. 5/3


# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. 060650050
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am


N 01/15/1971-18
18 04 2018

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ
/Ձեր՝2018-04-12 թիվ 15/15.9/5798-18/

Հարգելի՛ պարոն Տեր-Սիմոնյան.

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում քննարկվել է Ձեր կողմից ներկայացված «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ԵՄ՝ Հանուն երիտասարդության աշխատունակության խթանում» ծրագրի մասին» որոշման նախագիծը:

Նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ

Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին
Կատ. ՝ Վ.Մնացականյան
Կատ. ՝ Ա.Հողաբաշյան
Հեռ.՝ 060650627

113/11730-18
18.04.18թ

---


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ТАВУШСКАЯ ОБЛАСТЬ
ГУБЕРНАТОР

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
GOVERNOR


Կր. 5/3


4001, ՀՀ ք. Իջևան Սահմանադրության 1, РА, г. Иджеван Сагманадрутян 1, RA, Ijevan Sahmanadrutyan 1
հեռ.тел.phon. /0263/ 4-00-45, 4-23-56 Ֆաքս /факс , fax / /0263/ 4-00-45
E-mail: tavush@mta.gov.am Կայք WEB http://tavush.mtad.am


01/21.1/1944-18
18.04.18թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 12.04.2018թ. թիվ 15/15.9/5798-18 գրության հայտնում եմ, որ «Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ԵՄ՝ Հանուն երիտասարդության աշխատունակության խթանում» ծրագրի մասին» որոշման նախագիծը քննարկվել է ՀՀ Տավուշի մարզպետարանում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և արժանացել հավանության:

Նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Հ. ԱԲՈՎՅԱՆ

Կատ. Գ. Հարությունյան
Հեռ. 0 263 4 45 61

119/11739-18
18.04.18թ

ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Եմ՝ Հանուն երիտասարդության աշխատունակության խթանում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ ծրագրի 10-րդ կետում նշված է 166,057 եվրոյին համարժեք դրամ գումարի ապարանքների ու ծառայությունների ձեռք բերման գործարքներ, մինչդեռ ծրագրով նախատեսված ամբողջ 239,435 եվրո գումարից մեր դիտարկմամբ ձեռքբերման գործարքներ չեն միայն մարզերում իրականացվող գործունեության մշտադիտարկման և աշխատավարձի ծախսերը՝ ընդամենը 34,563 եվրո: Հետևաբար, առաջարկում ենք վերանայել և վերախմբագրել ծրագրի 10-րդ կետով նախատեսվող ձեռքբերման գործարքները, ինչպես նաև տվյալ ծախսատեսակները խմբավորել ոչ թե ըստ փուլերի, այլ ըստ ուղղությունների: | Առաջարկությունը հաշվի է առնվել լրամշակված ծրագիրը կցված է: |
| **ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| հայտնում ենք, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Եմ՝ հանուն երիտասարդության աշխատունակության խթանում» ծրագրի 5-րդ կետում անհրաժեշտ է խմբագրել ծրագրի բնագավառին վերաբերող դրույթները: Ծրագրի 10-րդ կետի 1.5.-րդ կետում թռիչքի տոմսերին և օրապահիկի ծախսերին վերաբերող դրույթներում անհրաժեշտ է հստակեցնել, թե վերջիններս ինչ առնչություն ունեն ծրագրի նպատակների հետ: Այդ առումով ծրագրի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները: | Առաջարկությունը հաշվի է առնվել լրամշակված ծրագիրը կցված է: |

| | |
|---|---|
| **ՀՀ պետական եկամուտների կոմիտե դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք. Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Տավուշի և Գեղարքունիքի մարզերում թվով 4 երիտասարդական կենտրոնների հիմնում՝ ներառյալ կահավորում և տեխնիկայով ապահովում: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ ծրագրի ընթացքում ամբողջ գույքի ձեռքբերման անհրաժեշտությունը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, քանի որ ներկայացված ծրագրից պարզ չէ, թե բարեգործական ոլորտան ներկայացված ծրագրի ավարտից հետո ինչպես է նախատեսվում տնօրինել այդ գույքը: Միաժամանակ, առաջարկում ենք ծրագրում նշել այն երաշխիքների մասին, որոնց համաձայն վարձակալվող տարածքները, որտեղ իրականացվելու են հարդարման և կահավորման աշխատանքներ, հետագա տարիներին ևս կտրամադրվեն կազմակերպությանը՝ վերջինիս կողմից շարունակական ծրագրեր իրականացնելու համար, այլ ոչ թե խնդիր կառաջանա նոր տարածքների վարձակալման, դրանց հարդարման և կահավորման համար: Հաշվի առնելով վերնոշյալը՝ հայտնում ենք, որ մինչև բարձրացված հարցերի հստակեցումը ծրագրի բարեգործական ոլորտը գտնում ենք ոչ նպատակահարմար: | Առաջարկությունը հաշվի է առնվել լրամշակված ծրագիրը կցված է: |

Հր. 5/4.1

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**___ ապրիլի 2018 թվականի N Մ -            -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի -ի N 01.1/14-2/-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի -ի N 06/3-8/-18 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի -ի N ՆՁ/22.2/-18 եզրակացությունները,* ***որոշում է.***

